Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-908-03.09.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 55-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 7.1-ին և 7.2-րդ կետերով.

«7.1) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի, բացառությամբ անշարժ գույքի և սույն մասի 11-րդ կետով սահմանված ապրանքների, ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում.

7.2) հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը՝ *Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում.*»,

2) 7-րդ մասում «և 2-րդ կետերում» բառերը փոխարինել «, 2-րդ և 7.1-ին կետերում» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերում «քանակը» բառից հետո լրացնել «, ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «ապրանքային դիրքի» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագրի» բառերով,

2) 3-րդ մասի 8-րդ կետում «ապրանքային դիրքը» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» բառերով:

Հոդված 4. *Օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասում «առանձնահատկությունները» բառից հետո լրացնել «, դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները» բառերը:*

Հոդված 5. Օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասում «ապրանքային դիրքի» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագրի» բառերով:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում *2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում նույն* հոդվածներով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան ծրագրային ապահովման աշխատանքներն ավարտելու օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում:

~~Առաջին ընթերցում~~

Երկրորդ ընթերցում

Կ-908-03.09.2024-ՏՀ-011/1

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 55-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 7.1-ին և 7.2-րդ կետերով.

«7.1) գործարքի առարկա հանդիսացող ապրանքի, բացառությամբ անշարժ գույքի և սույն մասի 11-րդ կետով սահմանված ապրանքների, ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում.

7.2) հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում.»,

2) 7-րդ մասում «և 2-րդ կետերում» բառերը փոխարինել «, 2-րդ և 7.1-ին կետերում» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերում «քանակը» բառից հետո լրացնել «, ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «ապրանքային դիրքի» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագրի» բառերով,

2) 3-րդ մասի 8-րդ կետում «ապրանքային դիրքը» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասում «առանձնահատկությունները» բառից հետո լրացնել «, դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները» բառերը:

Հոդված ~~4~~5. Օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասում «ապրանքային դիրքի» բառերը փոխարինել «ԱՏԳ ԱԱ ծածկագրի» բառերով:

Հոդված ~~5~~6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~սույն հոդված 1-ին և 2-րդ~~ 2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում նույն հոդվածներով սահմանված դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան ծրագրային ապահովման աշխատանքներն ավարտելու օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-908-03.09.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	**ՀՀ կառավարություն**	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 1-ին կետ**	ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումներին համապատասխան հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկության պարտադիր լրացման պահանջի սահմանման գործընթացի աստիճանական ներդրումն ապահովելու համար առաջարկվում է նախագծով սահմանել Կառավարությանը վերապահվող լիազորող նորմեր: Այդ կարգավորումներին համապատասխան Կառավարությունը կսահմանի հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման մասով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկության լրացման դեպքերը, կարգը և ժամկետները: Այդ նպատակով օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով լրացվող 7.2-րդ կետում առաջարկվում է լրացնել «Կառավարության սահմանած դեպքերում,	Ընդունվել է: Օրենքի նախագծի 1-ին հոդված 1-ին կետով լրացվող 7.2-րդ կետում լրացվել է «Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում» բառերը:	Ընդունվել է:

			կարգով և ժամկետներում» բառերը: Միաժամանակ, համանման կարգավորումներ նախատեսված են նաև հաշվարկային փաստաթղթերում ԱՏԳ ԱԱ ծածկագրերի վերաբերյալ տեղեկատվության պարտադիր լրացման մասով:		
2.	**ՀՀ կառավարություն**	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի 4-րդ հոդված**	ՀՀ հարկային օրենսգրքի 396.1-ին հոդվածով սահմանված են հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորում կարգին վերաբերող դրույթները: Նույն հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է նախատեսել լիազորող նորմեր, որով Կառավարությունն իրավասու կլինի սահմանելու հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորման համար դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները: Այդ նպատակով առաջարկվում է օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասում «առանձնահատկությունները» բառից հետո լրացնել «, դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 4. Օրենսգրքի 396.1-ին հոդվածի 2-րդ մասում «առանձնահատկությունները» բառից հետո լրացնել «, դրոշմավորման ծածկագրերի տրամադրման գները» բառերը:»: Միաժամանակ, լրամշակված նախագծում նոր հոդվածի լրացման հետ կապված փոխվել է նախագծի հոդվածների համարակալումը:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	**«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում**	Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում «հոդված» բառն առաջարկվում է փոխարինել «օրենքի» բառով, ինչպես նաև լրամշակված նախագծում ներառվող 3-րդ հոդվածով	Ընդունվել է: Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի **(լրամշակված նախագծի 6-րդ**	Ընդունվել է:

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 5-րդ հոդված, 1-ին մաս (լրամշակված նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս)	սահմանված դրույթի կիրառման համար սահմանել ուժի մեջ մտնելու ժամկետը:	**հոդվածի)** 1-ին մասում «սույն հոդված 1-ին և 2-րդ» բառերը փոխարինվել է «2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում նույն» բառերով:	
4.	**ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքով նախատեսվում է ներդնել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման նոր գործիքակազմ, այդ թվում՝ մի շարք մարմինների (Ոստիկանություն, Կադաստրի կոմիտե և այլն) և առևտրային բանկերի հետ տեղեկատվության ստացմամբ և փոխանցմամբ: Նշված կարգավորումների արդյունքում նախատեսվում է հարկային մարմնի տեղեկատվական համակարգում կատարել համապատասխան մոդուլների փոփոխություն: Հաշվի առնելով, որ օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ ծրագրային ապահովման գործընթացները գտնվում են ընթացիկ փուլում, առաջարկվում է 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքով սահմանված ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը՝ 2025 թվականի հունվարի 1-ի փոխարեն,	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			բացառությամբ նույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ կմտնեն 2025 թվականի ապրիլի 1-ից: Մասնավորապես, առաջարկվում է օրենքի 10-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում «2025 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «2026 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքերի» բառերով. 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2 1-ին մաս. «2 1 Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից:»:		
5.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացվել է նոր նախագծով՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-106-Ն օրենքի դրույթների կիրառման արդյունքում նախատեսվում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգում կատարել համապատասխան մոդուլների փոփոխություն: Հաշվի առնելով, որ օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ ծրագրային ապահովման գործընթացները գտնվում են ընթացիկ փուլում, առաջարկվում է 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-106-Ն օրենքով սահմանված ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը՝ 2025 թվականի հունվարի 1-ի փոխարեն:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-106-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Վերոգրյալով պայմանավորված Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածների:» բառերն առաջարկվում է փոխարինել «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:» բառերով, իսկ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասն առաջարկվում է ուժը կորցրած է ճանաչել:		
6.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացվել է նոր նախագծով՝ «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-107-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-107-Ն օրենքի դրույթների կիրառման արդյունքում նախատեսվում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգում կատարել համապատասխան մոդուլների փոփոխություն: Հաշվի առնելով, որ օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ ծրագրային ապահովման գործընթացները գտնվում են ընթացիկ փուլում, առաջարկվում է 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-107-Ն օրենքով սահմանված՝ ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը՝ 2025 թվականի հունվարի 1-ի փոխարեն: Վերոգրյալով պայմանավորված օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվում է «2025 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «2026 թվականի հունվարի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացվել է նոր նախագծով՝	«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-108-Ն օրենքի դրույթների կիրառման արդյունքում	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-108-Ն օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	նախատեսվում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգում կատարել համապատասխան մոդուլների փոփոխություն: Հաշվի առնելով, որ օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ ծրագրային ապահովման գործընթացները գտնվում են ընթացիկ փուլում, առաջարկվում է 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-108-Ն օրենքով սահմանված ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը՝ 2025 թվականի հունվարի 1-ի փոխարեն, բացառությամբ նույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, որն ուժի մեջ կմտնի 2025 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ, ՀՀ ԱԺ կողմից ս թ հոկտեմբերի 24-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով (Կ-893-23.07.2024-ՏՀ-011/1) սահմանված ժամկետում չվճարված հարկերի և վճարների մասով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժը սահմանվել է 0.075 տոկոս՝ 0 04 տոկոսի փոխարեն: Հաշվի առնելով կատարված այդ փոփոխությունը, առաջարկվում է տույժերի չափի հաշվարկման համար նույն դրույթները սահմանել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով և այդ օրենքի 71-րդ հոդվածում՝ տույժի հաշվարկման չափի ու կարգի մասով, հղում կատարել օրենսգրքի 401-րդ հոդվածին: Քանի որ օրենսգրքի 401-րդ հոդվածի փոփոխությունն		

			ուժի մեջ է մտնելու 2025թ. հունվարի 1-ից, առաջարկվում է նշված դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետը ևս սահմանել 2025թ հունվարի 1-ը: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է 1.Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի 71-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասի 1-ին և 2-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ «Սույն օրենքով սոցիալական վճար կատարելու պարտավորություն ունեցող վարձու աշխատողները (նրանց համար սոցիալական վճար հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող հարկային գործակալները) պատասխանատվություն են կրում սոցիալական վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար: Սոցիալական վճարը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վարձու աշխատողը (նրա համար սոցիալական վճարներ հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող հարկային գործակալը) վճարում է տույժ՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված չափով և կարգով:». 2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Սոցիալական վճարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը չվճարված սոցիալական		

			վճարների և դրանց համար սույն օրենքով սահմանված տույժերի կատարման ապահովումը, ինչպես նաև հարկադիր կատարմանն ուղղված միջոցներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:», 2) օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում «2025 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «2026 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի,» բառերով, 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս. «3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: 2025 թվականի հունվարի 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժը վճարվում է 0.075 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:»:		
8.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացվել է նոր նախագծով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2024	«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-109-Ն օրենքով սահմանված կարգավորումները վերաբերելի են «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքով նախատեսված հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման նոր գործիքակազմի կարգավորումներին, իսկ ՀՕ-104-Ն օրենքի՝ արգելադրման նոր գործիքակազմի դրույթների	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

		թվականի փետրվարի 28-ի ՀՕ-109-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	մասով, ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսվում է սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը, ուստի առաջարկվում է ՀՕ-109-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը ևս սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը՝ 2025 թվականի հունվարի 1-ի փոխարեն: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է օրենքի 2-րդ հոդվածում «2025 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «2026 թվականի հունվարի 1-ից» բառերով:		
9.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացվել է նոր նախագծով՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-110-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-110-Ն օրենքով սահմանված կարգավորումները վերաբերելի են «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի փետրվարի 28-ի ՀՕ-104-Ն օրենքով նախատեսված հարկային պարտավորությունների կատարումն ապահովող արգելադրման նոր գործիքակազմի կարգավորումներին, իսկ ՀՕ-104-Ն օրենքի՝ արգելադրման նոր գործիքակազմի դրույթների մասով, ուժի մեջ մտնելու ժամկետը նախատեսվում է սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը, ուստի, առաջարկվում է ՀՕ-110-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը ևս սահմանել 2026 թվականի հունվարի 1-ը՝ 2025 թվականի հունվարի 1-ի փոխարեն: Վերոգրյալով պայմանավորված օրենքի 2-րդ հոդվածում «2025 թվականի հունվարի 1-ից» բառերը առաջարկվում է փոխարինել «2026 թվականի հունվարի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է: